

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԹՈՐՈՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՇԱԼԻԿՈՅԻ

ԵՐԿԼԵՁՈՒ ԱՆՁԻ ԵՍ-ԿՈՆՑԵՊՏԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԹ. 00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, ամձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Կարինե Աղաբեկի Նալչաջյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Հոգեբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Սամվել Սուրենի Խուրոյան**

Հոգեբանական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր **Հարություն Արտավազի Բաբայան**

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ. հոկտեմբերի 28-ին՝ ժամը 12⁰⁰-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. սեպտեմբերի 28 -ին:

Փիլիսոփայության և հոգեբանության
064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ



Կ.Ե. Վարդանյան

ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը:

Աշխարհի լեզվա-մշակութային բազմազանության հետ բախվող և այն յուրացնող անձն, անշուշտ, ունի հոգեբանական այնպիսի յուրահատկություններ, որոնցով տարբերվում է միալեզու անձից: Այն, թե լեզվի յուրացումը ինչպիսի ազդեցություն է գործում անձի, նրա հոգեկան գործունեության և առանձնահատկությունների վրա, ինչպիսի հոգեբանական նորագոյացությունների առաջացմամբ է զուգորդվում երկլեզվության ձևավորումը՝ կարևոր նշանակություն ունի բազմաթիվ գործնական ու տեսական խնդիրների լուծման համար: Դրանք թվում են իմացական գործընթացների, խոսքի և մտածողության հարաբերակցությունը, հաղորդակցության օրինաչափությունները, երկլեզվակիր անհատի և նրա խոսքային գործունեության ձևավորման առանձնահատկությունները և այլն: Այս ամենից բխում են նաև կարևոր սոցիալ-հոգեբանական հետևանքներ, որոնք կապված են միջազգային ինտեգրացիայի, ազգերի ինքնապահպանման, լեզուների ուսուցման ասպարեզում կրթական համակարգի կատարելագործման և այլ հարակից խնդիրների հետ:

Հետազոտության նպատակն է՝ երկլեզվության երևույթի բազմակողմանի վերլուծության ճանապարհով բացահայտել դրա ազդեցությունն անձի Ես-համակարգի վրա, պարզել երկլեզվության և անձի մշակութային նախապատվությունների հարաբերակցության բնույթը:

Հետազոտության հիմքում ընկած գիտական վարկածի համաձայն՝ երկլեզվությունն ուղղակի ազդեցություն է գործում անձի Ես-կոնցեպցիայի և մշակութային նախապատվությունների վրա՝ փոփոխությունների ենթարկելով դրանք: Ընդ որում, երկլեզվության տարատեսակներից յուրաքանչյուրը (կոորդինատային, բաղադրյալ) յուրահատուկ է իր ազդեցության չափի ու որակի տեսակետից, մասնավորապես, կոորդինատային երկլեզվությունը անձի ինքնագիտակցությունը և մշակութային նախապատվությունները փոփոխող ավելի ուժեղ գործոն է, քան երկլեզվության բաղադրյալ տեսակը:

Գիտական վարկածը ստուգելու և աշխատանքի նպատակն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

1. համակարգված և համառոտ կերպով ներկայացնել հոգելեզվաբանության շրջանակներում երկլեզվության խնդրի վերաբերյալ առկա մտեցումներն ու հետազոտական տվյալները,
2. բացահայտել երկլեզվության ազդեցությունը անձի ինքնագիտակցության, իմացական գործընթացների, մասնավորապես, մտածողության, ինչպես նաև սոցիալականացման գործընթացի և վարքի յուրահատկությունների վրա,

3. ներկայացնել երկլեզվության երևույթն իր տիպերով և ազդեցություններով՝ հատուկ ուշադրություն դարձնելով փոխներթափանցման /ինտերֆերենցիայի/ հարցին,
4. փորձարարական ճանապարհով բացահայտել և համեմատության մեջ դնել միալեզու և երկլեզու անձանց Ես-կոնցեպցիաները,
5. փորձարարական ճանապարհով հետազոտել և բացահայտել այն կապերը, որոնք առկա են երկլեզվության տարբեր տիպերի և անձի էթնիկական ինքնագիտակցության և մշակութային նախապատվությունների միջև:

Հետազոտության օբյեկտը երկլեզու անձի ինքնագիտակցության առանձնահատկություններն են, նրա հոգեբանական յուրահատկությունները:

Հետազոտության առարկան կոորդինատային, բաղադրյալ, հավասարակշռված, թերի երկլեզվակիր անձանց Ես-կոնցեպցիան է և դրա հետ սերտորեն առնչվող ներհոգեկան զարգացումները:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքը պատմամշակութային և էվոլյուցիոն մոտեցումն է անձի ծնավորման խնդրին, որը տեղի է ունենում գործունեության ընթացքում և կրում է վերջինիս ուղղակի ազդեցությունը (Լ. Ս. Վիգոտսկի, Ա.Ն. Լեոնտև, Դ.Ն. Ուզնաձե, Ա.Գ. Ասմոլով և այլոք): Որպես ուսումնասիրության տեսական հիմք ծառայել են անձի, մասնավորապես երկլեզու անձի Ես-կոնցեպցիայի առանձնահատկություններն արտացոլող հոգեբանական տեսությունները, հիմնադրույթներն ու հետազոտությունները (Ջ. Ֆերգյուստոն, Մ. Ն. Ֆիշման, Է. Հաուզեն, Մ. Ադշեր, Գ. Քլիֆֆորդ, Հ. Մարքուս և Ս. Քիթայամա, Ֆելիսիթի դը Ջուլիեթա, Յոշիդա Քենսաթու, Ջ.Ս. Ֆիննի, Դեվիչ-Նավարո, Հ. Թեջֆել, Մ. Նինո Մուրջիա, Վ. Բենետ-Մարտինեզ, Ջ. Հարիթաթոսը, Ի.Ս. Կոն, ՈՒ. Ջեյմս, Տ. Շիրուտանի, Ռ. Բեռնս, Ա.Ա. Լեոնտեվ, Ա. Նալչաջյան, Դ. Սլոբին, Ջ. Գրին, Ն. Խոմսկի Ռ. Բրաուն, Ս. Սպրինգեր), ինչպես նաև Ռ. Փարկի, Է. Սթուունքվիստի, Վ. Մանչինիի մարզինալ անձի տեսությունները:

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն ուղղված են իրականացնելու հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքն իրականացվել է հետևյալ տեսական և փորձարարական հետազոտական մեթոդների համադրմամբ.

- գիտական գրականության /հոգեբանական և հոգեվեզվաբանական/ տեսական վերլուծություն,
- տեսական և փորձարարական նյութի որակական ու քանակական վերլուծություն:

Փորձարարական աշխատանքում ներառված են եղել հետևյալ մեթոդիկաները.

- նախնական տվյալներ ստուգող հարցաթերթիկ (ստուգման են ենթարկվել փորձարկվողների կողմից լեզուների ձեռքբերման պայմանները և հարակից մի շարք տվյալներ),
- լեզվական նախապատվության ստուգում (ըստ Մակնամարայի),
- մշակութային նախապատվության ստուգում (Թրոփիի մեթոդիկայի տարբերակ),
- լեզվի իմացության մակարդակի որոշում (ALTE համակարգ, ըստ Ալդերսոն Զ. Բ.),
- Կուն Մակպարտլենդի «Ո՞վ եմ ես» թեստ ,
- կիրառվել է ստացված էմպիրիկ տվյալների մաթեմատիկական մշակում՝ կոռելյացիոն մեթոդի կիրառմամբ: Կիրառվել է կոռելյացիոն գործակցի հաշվարկման՝ Պիրսոնի պարամետրիկ մեթոդը:

Հետազոտության տեսական նշանակություն այն է, որ աշխատանքում գիտատեսական վերլուծության են ենթարկվել մայրենի և օտար լեզուների յուրացման և անձի խոսքային գործունեության հոգեբանական ասպեկտները և օրինաչափությունները: Տեսական վերլուծության է ենթարկվել երկլեզվության, լեզվական փոխներթափանցման երևույթը, հետազոտվել են այն սոցիալ-հոգեբանական պայմանները, որոնցում տեղի է ունենում երկլեզվության ձևավորումը՝ ըստ իր ուրույն տարատեսակների: Կատարվել է միալեզու և երկլեզու անձերին բնորոշ հոգեբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն, այս տեսանկյունից դիտարկվել է անձի էթնո-հոգեբանական մարզինալացման խնդիրը: Երկլեզվության և անձի ինքնագիտակցության, վերջինիս տարբեր ասպեկտների վրա դրա ունեցած ազդեցության հարցը, որը հանգամանալից վերլուծության է ենթարկված աշխատանքում՝ նույնպես ունի տեսական կարևոր նշանակություն:

Հետազոտության գործնական նշանակություն այն է, որ ստացված հետազոտական արդյունքները կարող են նպաստել գործնական մի շարք խնդիրների լուծմանը: Մասնավորապես,

- Ստացված արդյունքները կարող են օգտագործվել ինչպես հոգեբանների, այնպես էլ մանկավարժների և լեզվաբանների կողմից տեսական և կիրառական բնույթի հետազոտություններ կատարելիս:
- Օտար լեզուների ուսուցման հարցում ազգային ինքնության պահպանման հետ կապված խնդիրներին գիտականորեն հիմնավորված մոտեցումներ ունենալու համար:
- Հիմք կծառայի «Երկլեզվության հոգեբանական հիմքերը» բուհական միջառարկայական բնույթի դասընթացի մշակման և ներդրման համար:

Հետազոտության գիտական նորույթ:

Բացահայտվել է երկլեզվության յուրաքանչյուր առանձին տեսակի (կոորդի-նատային, բաղադրյալ) ազդեցության յուրահատկությունը անձի Ես-կոնցեպ-

ցիայի, սոցիալ-մշակութային ինքնանույնացման և մշակութային նախապատվության վրա:

Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի հոգեբանության, ապա՝ մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, որտեղ ներկայացվել են հաշվետու զեկույցներ: Աշխատանքի ընթացիկ և վերջնական արդյունքները քննարկման են ներկայացվել Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայի ռոմանագերմանական բանասիրության ամբիոնում և «Եվրոլինգվա» միջազգային լեզուների ինստիտուտում: Թեհրանի Թարբիաթ Մոդարես Համալսարանի հոգեբանության Ֆակուլտետի կողմից կազմակերպված լեզվի խնդիրներին նվիրված համաժողովում ներկայացվել են աշխատանքի միջանկյալ արդյունքները:

Հետազոտության հավաստիությունը և հուսալիությունը ապահովված է կիրառված մեթոդական ապարատով, մեթոդաբանական հիմքերով, հետազոտական նյութերի բազմակողմանի հոգեբանական վերլուծությամբ, ինչպես նաև փորձարկվողների անհրաժեշտ քանակակազմի ընդգրկմամբ: Ապահովվել է նաև փորձարարական աշխատանքի արդյունքների որակական և քանակական վերլուծությունների համարժեք մեթոդների օգտագործումը: Աշխատանքն իրականացված է՝ հաշվի առնելով հետազոտվող խնդիրների վերաբերյալ ժամանակակից հոգեբանության և հոգելեզվաբանության ասպարեզում առկա գիտական արդյունքները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1) Լեզուն սերտորեն կապված լինելով մարդու ոչ միայն մտածողության և այլ կոգնիտիվ գործընթացների հետ՝ միաժամանակ գտնվում է ֆունկցիոնալ կապերի մեջ անձի հոգեբանական կառույցի հետ:

2) Քանի որ մտածողության զարգացումը խոր ազդեցություն է գործում անձի հոգեկան կառուցվածքի վրա, ապա լեզուն մտածողության հետ շաղկապված լինելու բերումով անձի հոգեբանական որակների վրա ազդող կարևոր գործոն է:

3) Ինչպես, ընդհանրապես, սոցիալական միջավայրը, այնպես էլ դրա մասը կազմող լեզվամշակութային միջավայրը ուղղակի ազդեցություն է գործում անձի՝ Ես-կոնցեպցիայի ձևավորման վրա: Եվ քանի որ լեզվամշակութային միջավայրերը տարբերվում են մեկը մյուսից, հետևաբար նրանցից յուրաքանչյուրը կերտում է անձի Ես- կոնցեպցիայի տարբեր մոդելներ:

4) Թերի երկլեզվությունը անձի էթնիկական ինքնագիտակցության վրա ազդող շատ թույլ գործոն է:

5) Անկախ անձի ազգային պատկանելիությունից, բաղադրյալ երկլեզվությունն էթնիկական ինքնագիտակցության մեջ զգալի փոփոխություններ առաջացնող գործոն է: Այն թուլացնում է անձի էթնիկական ինքնանույնացման

աստիճանը: Երկլեզվության տեսակը ազդում է անձի մշակութային նախապատվության վրա: Մասնավորապես, այն երկլեզուները, ովքեր իրենց երկրորդ լեզուն ձեռք են բերել միևնույն միջավայրում, ինչ իրենց մայրենի լեզուն, մշակութային նախապատվությունների տեսակետից փոփոխություններ գրեթե չեն կրում: Իսկ նրանք, ովքեր ձեռք են բերել երկրորդ լեզուն սովյալ օտար լեզվի բուն միջավայրում, մշակութային կողմնորոշումների ուժեղ արտահայտված փոփոխություններ են կրում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է համակարգչային 143 էջ կազմող շարադրանքից՝ ներածություն, չորս գլուխ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ և հավելվածներից:

ԱՏԵՆԱՒՃՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ **«Լեզվի յուրացման հոգելեզվաբանական խնդիրները»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից՝ «Հոգելեզվաբանական մոտեցումներ լեզվի և խոսքի հիմնարար խնդիրներին», «Մայրենի լեզվի յուրացումը երեխայի կողմից որպես հոգելեզվաբանական խնդիր»:

Առաջին գլխում քննարկվում են հոգելեզվաբանական խնդիրները, որոնք առնչվում են լեզվի և խոսքի հիմնարար հարցերին: Դիտարկվում է լեզվաբանական խնդիրների հետազոտության մեջ հոգեբանական գործոններին անդրադարձնալու անհրաժեշտությունը:

Աշխատանքի այս հատվածում փորձ է կատարվել համակողմանիորեն ներկայացնել երեխայի մտավոր զարգացումը և դրա կապը լեզվի յուրացման հետ:

«Երկլեզվությունը որպես լեզվաբանական և հոգեբանական ֆենոմեն» վերնագիրն է կրում աշխատանքի **երկրորդ գլուխը**, որը կազմված է չորս ենթագլուխներից՝ «Երկլեզվություն և փոխներթափանցում», «Երկլեզվության տիպերը և երկրորդ լեզվի յուրացման հոգեբանական օրինաչափությունները», «Երկլեզվության ազդեցությունը անձի կոգնիտիվ ոլորտի ձևավորման վրա», «Երկլեզվության ձևավորման սոցիալ-հոգեբանական պայմանները»:

Երկրորդ գլխում ներկայացվում են երկլեզվության հիմնահարցի վերաբերյալ առկա գիտական պատկերացումները, երկլեզվության տիպերը՝ ըստ տարիքային չափանիշի, ըստ լեզվի իմացության մակարդակի, ըստ երկրորդ լեզվի ձեռքբերման միջավայրի: Քննարկվում են երկրորդ լեզվի յուրացման հոգեբանական օրինաչափությունները, այդ հիմնախնդրի վերաբերյալ տարբեր կոնցեպտուալ մոտեցումներ: Վերլուծված և ներկայացված են երկլեզվության ձևավորման սոցիալ-հոգեբանական պայմանները:

Առաջին ենթազլխում քննարկվում է այն խնդիրը, թե ինչպիսին է երկլեզվության ազդեցությունն անձի վրա: Երկլեզվության պայմաններում անձը ձեռք է բերում նոր դիրքորոշումներ, ձևավորվում են նրա բազմաշերտ ու բազմաբովանդակ Ես-պատկերներն ու յուրօրինակ վարքը: Դրանց ձևավորմանը նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ուսումնասիրությունը հնարավորություն կտա պարզելու, թե հոգեբանական տեսակետից ինչո՞վ է յուրահատուկ երկլեզվակրի անձը, երկրորդ լեզվի յուրացման ազդեցության տակ ինչպիսի՞ նորագոյացություններ են ձևավորվում նրա հոգեկանում, որոնք են այդ ամենի կոգնիտիվ, հուզական և վարքային դրսևորումները: Ինչո՞վ է յուրահատուկ երկլեզու անձի սոցիալական իրավիճակը, միջանձնային շփումները, նրա «սուբյեկտիվ սեմանտիկ տարածքը» (Վ. Պետրենկո և այլոք):

Երկրորդ ենթազլխում ներկայացվել են երկլեզվության տիպերը և երկրորդ լեզվի յուրացման հոգեբանական օրինաչափությունները:

Ակնհայտ է, որ երկրորդ լեզվի յուրացումը տեղի չի ունենում այն փուլերով, որոնք առկա են մայրենի լեզվի պարագայում (ներկայացված են աշխատանքում): Աշխատանքի այս հատվածում ներկայացված է երկլեզվության տեսակների դասակարգումը՝ ըստ ստորև բերվող չափանիշների:

I Ըստ տարիքային չափանիշի՝

1. մանկական երկլեզվություն /ա) միաժամանակյա, բ) հաջորդական/
2. դեռահաս տարիքի երկլեզվություն
3. չափահաս տարիքի երկլեզվություն

II Ըստ լեզվի իմացության մակարդակի՝

1. հավասարակշռված երկլեզվություն
2. թերի երկլեզվություն

III Ըստ խմբի անդամակցության և մշակութային ինքնության՝

1. երկմշակութային երկլեզուներ
2. միամշակութային երկլեզուներ
3. ակուլտուրացված երկլեզուներ
4. դեկուլտուրացված երկլեզուներ

IV Ըստ երկրորդ լեզվի ձեռքբերման միջավայրի՝

1. կոորդինատային
2. բաղադրյալ

Երկրորդ գլխի երրորդ ենթազլխում անդրարարծ է կատարվում անձի կոգնիտիվ ոլորտի ձևավորման վրա երկլեզվության ազդեցության հարցին:

Երկրորդ գլխի չորրորդ ենթազլխում արծարծվում են երկլեզվության ձևավորման սոցիալ-հոգեբանական պայմաններին վերաբերող հարցերը:

Առանձին կարևորություն է ներկայացնում նաև երկլեզվության սոցիալ-հոգեբանական ասպեկտի հետազոտությունը:

«Երկլեզվությունը և անձի ինքնագիտակցությունը» խորագիրը կրող **երրորդ գլխում** քննարկվում է երկլեզվության և անձի ինքնագիտակցության միջև առկա կապը, արժարժվում է այս համատեքստում անձի Ես-կոնցեպցիայի ամբողջականության և ներքին ֆունկցիոնալ փոփոխությունների հարցը: Ներկայացվում է անձի էթնո-հոգեբանական մարզինալացման և մարզինալ անձի հոգեբանական ֆենոմենը՝ այն դիտարկելով երկլեզվության՝ անձի ինքնագիտակցության վրա թողած հոգեբանական ազդեցության տեսակետից:

«Անձի ինքնագիտակցության բնույթը» ենթագլխում հիմնական գծերով ներկայացված են հոգեբանության մեջ առկա տեսակետներն անձի ինքնագիտակցության և անձի լեզվա-մշակութային ինքնության վերաբերյալ: Այս համատեքստում ներկայացված է Բերքլեյ Էմիլիոսի և Սյուզան Էրվին Թրիփի հետազոտությունը, որտեղ ճապոնացի և ամերիկացի կանանց հանձնարարված է եղել լրացնել անավարտ նախադասությունները երկու լեզվով: Հետազոտության արդյունքները բացահայտեցին բովանդակային տեսակետից միանգամայն տարբեր ավարտներ, որոնք բխում էին փորձարկվողների լեզվա-մշակութային դիրքորոշումներից: Օրինակ, «Երբ իմ ցանկությունները բախվում են ընտանիքիս ցանկությունների հետ...» ճապոներեն լեզվով կիսատ նախադասությունը լրացնելիս այն ստացավ «դա մեծ դժբախտության սկիզբն է» ավարտը, իսկ անգլերեն լեզվով լրացնելիս այն ստացավ «ես անում եմ, ինչ ուզում եմ» ավարտը:

Հետազոտության այս հատվածում ներկայացված են նաև երկլեզվություն-ինքնություն կապի վերաբերյալ մի շարք նորագույն հետազոտությունների արդյունքներ: Մասնավորապես բերվում է Ֆ. Գրոսջինի տեսակետն այն մասին, որ աշխարհի երկլեզուների մեծ մասը մեկ մշակույթի կրողն են և ինքնության փոփոխությունները չեն վերաբերվում նրանց: Իսկ ինչ վերաբերում է երկլեզու երկմշակութայիններին, նրանց մոտ, ըստ Ֆ. Գրոսջինի, տեղի է ունենում անձնավորության փոփոխություն, քանի որ նրանք պարզապես իրենց վարքը, վերաբերմունքը և զգացմունքները համապատասխանեցնում են տվյալ միջավայրին, մշակույթին, իրավիճակին: Իսկ Յ. Հոնգի, Ս.Յ. Չիուի, Թ. Քունգի և Վ. Բենետ-Մարտինեզիի ուսումնասիրություններում առաջ է քաշում «մշակութային շրջանակի միացում» հասկացությունը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ երկմշակութային անհատների արժեքները և վերագրումները փոխանցվում են առկա մշակույթին համապատասխան դիրքորոշումների համակարգ: Երկմշակութային անհատներն ունեն երկու ներքնայնացված մշակույթներ, որոնք ուղղորդում են նրանց զգացմունքները, մտքերը և գործողությունները՝ ըստ իրադրության:


Ատենախոսության չորրորդ՝ «Երկլեզվության և անձի ինքնագիտակցության միջև եղած կապի փորձարարական հետազոտություն» զլխում դիտարկում ենք երկլեզվության և անձի ինքնագիտակցության միջև եղած կապի փորձարարական հետազոտությունը, հետազոտության իրականացման մեթոդները, վիճակագրական արդյունքների վերլուծությունը և մեկնաբանությունը: Կապեր են հաստատվում անձի ինքնագիտակցության և մշակութային նախապատվությունների վրա երկլեզվության տարբեր տիպերի թողած ազդեցության միջև:

Երկլեզվության և անձի ինքնագիտակցության միջև եղած կապը բացահայտելու համար մենք անցկացրել ենք էմպիրիկ հետազոտություն 17-35 տարեկան 150 չափահաս մարդկանց հետ: Հետազոտությունը անցկացվել է Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայում: Փորձարկվողները տարբեր ֆակուլտետների երկրորդ, երրորդ, չորրորդ կուրսի ուսանողներ են, ինչպես նաև ընդգրկել ենք մագիստրոսական աստիճան հայցող ուսանողներին: Մասնավորապես՝ ընդգրկել ենք մեր հետազոտության մեջ օտարերկրյա ուսանողների, որոնք ազգությամբ պարսիկ են, սովորում են Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայի և՛ նախապատրաստական, և՛ բակալավրի, և՛ մագիստրոսական բաժիններում: Հետազոտությունը անցկացվել է Ակադեմիայի լսարաններում, 2010 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին:


Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ պարսիկ երկլեզու փորձարկվողներից միայն 40 %-ն է նշել ազգային պատկանելիությունը, իսկ հայ երկլեզու փորձարկվողներից՝ 47%-ը, մինչդեռ թուսախոս հայ երկլեզուների միայն 20%-ն է նշել ազգային պատկանելիությունը, թերի երկլեզու պարսիկ փորձարկվողների՝ 80%-ը և հայ թերի երկլեզու փորձարկվողների՝ 74%-ն է նշել իր ազգային պատկանելիությունը:

Բաղադրյալ և կոորդինատային երկլեզուների դեպքում կարող ենք տեսնել հետևյալ պատկերը. բաղադրյալ երկլեզուների 43%-ը նշել է իր ազգային պատկանելիությունը, իսկ կոորդինատային երկլեզուների միայն 28%-ն է նշել այն, այստեղ մենք տեսնում ենք բավականին մեծ տոկոսային տարբերություն երկլեզուների էթնիկական ինքնանույնացման հարցում, ևս մեկ անգամ համոզվում ենք, որ գործում է մարզինալացման գործոնը:

Այժմ դիտարկենք մշակութային նախապատվությանը առնչվող տվյալները. բաղադրյալ երկլեզուները ավելի մոտ են իրենց էթնիկական սկզբունքներին, դա են վկայում տոկոսային տվյալները՝ բաղադրյալ երկլեզուների 80%-ը նախապատվությունը տվել է առաջին մշակույթին և միայն 20%-ն է, որ գտնվում է առաջին և երկրորդ մշակույթների սահմանագծում: Կոորդինատային երկլեզուների մոտ, բնականաբար, պատկերն ամբողջությամբ փոխվում է: Կոորդինատային երկլեզուների 13.3%-ը նախապատվությունը տալիս է առաջին մշակույթին, 40%-ը գտնվում է երկու մշակույթների սահմանագծում և 46,6%-ը հակված է դեպի երկրորդ մշակույթը:



Նկար 1. Ազգային ինքնանույնացման տեղը՝ ըստ Կուն Մակպարտյենի մեթոդիկայի



Նկար 2. Կողորինատային և բաղադրյալ երկլեզուների ազգային ինքնանույնացման տեղը՝ ըստ Կուն Մակպարտյենի մեթոդիկայի

Մեր առջև դրված հետազոտական խնդիրների լուծման տեսակետից կարևոր է, հենվելով փորձարարական աշխատանքից ստացված տվյալների վրա, բացահայտել մի շարք կապեր ու կախվածություններ, որոնք գոյություն ունեն հայ և պարսիկ՝ տարբեր տիպի լեզվակիրներ հանդիսացող փորձարկվողների մոտ: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, թե հայ և պարսիկ տարբեր տիպի երկեզուների խմբերում ի՞նչ տեղ է գրավում էթնիկական ինքնանույնացման գործոնը, պարզել, թե ինչպիսի՞ կոռելյացիոն կախվածություն կա նրանց լեզվական նախապատվությունների և էթնիկական ինքնանույնացման առանձնահատկությունների միջև: Այսինքն, որպես անկախ փոփոխականներ հանդես են գալիս փորձարկվողների էթնիկական պատկանելիությունն ու միալեզու կամ երկլեզու լինելու հանգամանքը: Ընդ որում, երկլեզվության գործոնը, որպես անկախ փոփոխական, դիտարկված է իր հիմնական տիպաբանական խմբերով՝ բաղադրյալ, կորոզիմատային, թերի: Թերի երկլեզու փորձարկվողներից ստացված արդյունքները ներկայացված են առանձին: Կիրառվել է կոռելյացիոն գործակցի հաշվարկման՝ Պիրսոնի պարամետրիկ մեթոդը:

Այսպիսով, պետք էր կապ հաստատել.

1. Թերի երկլեզու կամ միալեզու պարսիկներից և հայերից ստացված տվյալների միջև.

- ազգային պատկանելիությունը նշված է, թե՛ ոչ
- ո՞ր տեղում է
- հանել միջին արժեք

Ստացված տվյալների կոռելյացիոն վերլուծությունը բացահայտեց հետևյալ պատկերը $r=0.54$: Սա նշանակում է, որ բացահայտվել է միջինից թույլ ուժեղության դրական կոռելյացիոն կախվածություն թերի երկլեզվության և էթնիկական ինքնագիտակցության արտահայտվածության միջև: Այսինքն, ըստ էության թերի երկլեզուների էթնիկական ինքնագիտակցությունը ուժեղ կախվածության մեջ չի գտնվում նրանց երկրորդ լեզվի իմացությունից:

2. Բաղադրյալ երկլեզու պարսիկների և հայերի միջև.

- ազգային պատկանելիությունը նշված է, թե՛ ոչ
- որ տեղում է
- հանել միջին արժեք

Այժմ դիտարկենք մեր այս խնդրից ստացած տվյալները, այն է երկլեզու պարսիկների և երկլեզու հայերի մոտ էթնիկական ինքնագիտակցության կախվածությունը երկլեզվության փաստից՝ այն դիտարկելով իր տարբեր տեսակների շրջանակներում: Պարզվեց, որ պարսիկ բաղադրյալ երկլեզուներ-հայ բաղադրյալ երկլեզուներ կոռելյացիոն գործակիցը ($r=0.91$) վկայում է ուժեղ դրական կապի գոյության մասին: Սա նշանակում է, որ անկախ ազգային պատկանելիությունից բաղադրյալ երկլեզու անձանց մոտ էթնիկական ինքնագիտակցությունը ուժեղ կախվածության մեջ է գտնվում երկլեզվության

տվյալ տիպին պատկանելու փաստից: Մեկ անգամ ևս նշենք, որ բաղադրյալ համարվում է երկլեզվության այն տեսակը, երբ երկրորդ լեզվի յուրացումը տեղի է ունեցել միևնույն միջավայրում ինչ մայրենի լեզուն: Այսպիսով, բաղադրյալ երկլեզունների պարագայում հաստատվում է մեր առաջ քաշած վարկածն այն մասին, որ երկլեզվությունը էթնիկական ինքնանույնացման և ինքնագիտակցության վրա ազդող գործոն է: Այսինքն, երկլեզվությունը էթնիկական ինքնագիտակցության տեսակետից անձին դարձնում է երկու մշակույթների սահմանագծին գտնվող անհատ:

Նույնն է վկայում նաև կորորդինատային երկլեզունների հետազոտությունից ստացված արդյունքը: Այն է՝ պարսիկ կորորդինատային երկլեզուներ-հայ կորորդինատային երկլեզուներից ստացված տվյալների համադրության արդյունքում կոռելյացիոն գործակիցը ստացվեց $r = 0,993$: Կրկին նշենք, որ կորորդինատային համարվում են այն երկլեզուները, որոնք երկրորդ լեզուն ձեռք են բերել տվյալ օտար լեզվի բուն միջավայրում: Այս դեպքում արդեն, ինչպես տեսնում ենք, գրեթե բացարձակ դրական կախվածություն կա ուսումնասիրվող երկու երևույթների միջև: Սա վկայում է այն մասին, որ բուն օտար լեզվի միջավայրում երկրորդ լեզվի տիրապետումն անձի էթնիկական ինքնագիտակցությունը մարզինալացնող աներկբայելի գործոն է:

Վերադառնալով միալեզու, եթե ավելի ճշգրիտ բնորոշենք՝ թերի երկլեզու, անձանց պարագային, կրկին անկախ էթնիկական պատկանելիությունից օտար լեզվի շատ թույլ տիրապետումը թույլ գործոն է էթնիկական ինքնանույնացման և էթնիկական ինքնագիտակցության մեջ փոփոխություններ առաջացնելու տեսակետից: Միջին թուլության կոռելյացիոն կապի առկայությունը, տվյալ դեպքում, կարելի է մեկնաբանել լեզվական գործոնից դուրս գտնվող այլ փոփոխականների ազդեցությամբ (օրինակ, այլազգիների հետ շփումների առկայություն, ինֆորմացիայի առատություն և այլն):

Թերի երկլեզու պարսիկներից և հայերից ստացված տվյալները համեմատության մեջ դրվեց երկլեզու պարսիկներից և հայերից ստացված տվյալների հետ, և բացահայտվեց դրանց միջև առկա կոռելյացիոն կապը:

Հարց էր դրված նաև որոշել, թե ինչպիսին է կոռելյացիոն կապի բնույթը ըստ մեր կողմից առաջ քաշված առաջին և երկրորդ խնդիրների, այսինքն, պետք էր տեսնել, թե արդյոք կոռելյացիոն կապ գոյություն ունի թերի երկլեզու անձանց և հավասարակշռված երկլեզուների հետազոտությունից ստացված կախվածությունների տվյալների միջև: Տվյալ դեպքում մենք ստացանք շատ թույլ արտահայտված կոռելյացիոն գործակից՝ $r = 0.1$: Սա նշանակում է, որ տվյալ գործոնների միջև կախվածություն գրեթե չկա:

Ինչպես երևում է ստորև ներկայացված աղյուսակից, առավել ևս կորորդինատային երկլեզուների մոտ ակնհայտ է էթնիկական պատկանելիության հանգամանքն անտեսելու կամ, լավագույն դեպքում, ոչ առաջնային համարելու

հանգամանքը: Համադրելով տվյալները, ստացանք հետևյալ պատկերը՝ ըստ կոռելյացիոն կապերի:

II Կոորդինատային և բաղադրյալ երկլեզուներ.

- ազգային պատկանելիությունը նշված է, թե՛ ոչ
- ո՞ր տեղում է
- հանել միջին արժեք

Այստեղ խնդիր էր դրված ստուգել, թե արդյո՞ք գոյություն ունի կոռելյացիոն կապ հետևյալ երկու գործոնների միջև. գոյություն ունի արդյո՞ք բաղադրյալ երկլեզուների պարագայում երկլեզվության և էթնիկական ինքնագիտակցության միջև առկա կախվածությունների և կոորդինատային երկլեզուների դեպքում բացահայտված կախվածությունների միջև: Բացահայտվեց հետևյալը, որ ակնհայտ է ուժեղ արտահայտված դրական կոռելյացիոն կապը՝ $r=0.92$, որը ևս մեկ անգամ հիմնավորում է մեր կողմից առաջ քաշած վարկածը:

Մենք հատուկ մեթոդիկայով բացահայտել ենք նաև փորձարկվողների մշակութային նախապատվությունները: Մեր հետազոտական վարկածի ստուգման տեսակետից կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք գոյություն ունի կոռելյացիոն կապ անձի երկլեզու լինելու հանգամանքի և նրա մշակութային նախապատվությունների միջև: Մեթոդիկան թույլ է տալիս ստուգել անձի մշակութային նախապատվությունները ըստ երեք չափանիշների՝ առաջնային նախապատվություն, երկրորդային և հավասարակշռված:

0. հավասարակշռված 1. առաջնային 2. երկրորդային

Կոռելյացիոն վերլուծությունը բացահայտեց հետևյալ արդյունքները $r=-99.8$, այսինքն արձանագրվել է շատ ուժեղ արտահայտված բացասական կոռելյացիոն կապ:

Բաղադրյալ երկլեզուները, որոնք սոցիալականցվել են սեփական էթնիկական մշակույթի միջավայրում, մշակութային նախապատվությունների տեսակետից պահպանել են սեփականի առաջնայնությունը: Նույնը չի կարելի ասել կոորդինատային երկլեզուների մասին, որոնք երկրորդ լեզուն տվյալ էթնիկական մշակույթի միջավայրում յուրացնելու հանգամանքի բերումով միաժամանակ յուրացրել են նաև իրականության մեջ իրենց շրջապատող միջավայրի մշակութային նորմերը և արժեքները: Այդ իսկ պատճառով, մշակութային նախապատվությունների գերակայության տեսակետից նրանց մոտ ակնհայտ է նոր մշակույթին տրվող նախապատվությունը:

Այսպիսով, ինչպես վկայում են փորձարարական աշխատանքից ստացված տվյալները, երկլեզվությունը բարդ հոգեվեգվաբանական ֆենոմեն է և այն լիարժեք կերպով հասկանալու ու մեկնաբանելու համար հարկավոր է երկլեզվության երևույթը դիտարկել երկլեզու անձի, նրա ինքնագիտակցության առանձնահատկությունների համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության շրջանակներում իրականացված տեսական և գործնական աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

1. Ժամանակակից հոգելեզվաբանությունը բազմակողմանի ուսումնասիրության ենթարկելով խոսքի և լեզվի հոգելեզվաբանական մոդելը, ինչպես նաև խնդիրը դիտարկելով անձի և հաղորդակցության հոգեբանության դիրքերից՝ ապացուցել է, որ լեզուն սերտորեն կապված լինելով մարդու ոչ միայն մտածողության և այլ կոգնիտիվ պրոցեսների հետ՝ միաժամանակ գտնվում է ֆունկցիոնալ կապերի մեջ անձի հոգեբանական կառույցի՝ Ես-ի հետ:

Ըստ երեխայի կողմից լեզվի յուրացման պրոբլեմի հետազոտողների, անկախ սոցիալ-մշակութային միջավայրից, այլ մարդկանց հետ շփման ընթացքում երեխայի բանականության զարգացումը տեղի է ունենում նրա խոսքի զարգացման համատեքստում: Քանի որ մտածողության զարգացումը խորը ազդեցություն է գործում անձի հոգեկան կառուցվածքի վրա, ապա լեզուն մտածողության հետ շաղկապված լինելու բերումով անձի հոգեբանական որակների վրա ազդող կարևոր գործոն է: Իսկ ինչ վերաբերում է մայրենի լեզվին, ապա այն, անցնելով յուրացման հոգելեզվաբանական տեսակետից բարդ փուլերով՝ իր կոնալեքսային ազդեցությունն է թողնում այն յուրացնող անձի ինչպես հոգեկանի կառուցվածքի ու ֆունկցիաների վրա: Զարգացող անձի հոգեկանի ինչպես կոգնիտիվ, այնպես էլ հուզական-մոտիվացիոն ոլորտները ներթափանցված են մայրենի լեզվի ազդեցություններով:

2. Երկլեզվության ձևավորման ընթացքում անձի համար մայրենի և երկրորդ /երրորդ և այլն/ լեզուները մտնում են բարդ հարաբերակցությունների մեջ: Երկլեզվության ֆենոմենը որպես բարդ լեզվաբանական և հոգեբանական երևույթ ենթարկվում է փոխներթափանցման (ինտերֆերենցիայի) գործընթացին, որն իր մեջ պարունակում է ինչպես զուտ լեզվական, այնպես էլ մշակութային ասպեկտներ: Երկլեզվությունը միատարր երևույթ չէ, այն ունի առաջացման տարբեր սոցիալ-հոգեբանական պատճառներ, տարբեր դրսևորումներ, տարբեր ներքին կառուցվածք: Փոխներթափանցման բնույթը և աստիճանը մեծապես կախված է երկլեզվության տիպից (բաղադրյալ, կոորդինատային, հավասարակշռված և թերի-երկլեզուներ):

3. Ինչպես սոցիալական միջավայրի մյուս գործոնները, այնպես էլ այն լեզվամշակութային միջավայրը, որի շրջանակներում տեղի է ունենում անձի սոցիալականացումը, ուղղակի ազդեցություն է գործում, նրա անձի՝ Ես-ի համակարգի ձևավորման վրա: Եվ, քանի որ լեզվամշակութային միջավայրերը տարբերվում են մեկը մյուսից, հետևաբար նրանցից յուրաքանչյուրը կերտում է Ես-կոնցեպցիայի տարբեր մոդելներ: Ըստ անձի հոգեբանության ժամանակակից մոտեցումների, անձի համակարգը միաժամանակ և՛ կայուն է, և՛ փոփոխական:

Ընդ որում, լեզվամշակութային ազդեցությունների տակ «մենք» և «նրանք» համակարգերում կարող են փոփոխություններ առաջանալ և հանգեցնել բազմամշակութային անձի ձևավորման ֆենոմենին, որն իր մեջ ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր:

4. Փորձարարական հետազոտության արդյունքում բացահայտվել է.

- Թերի երկլեզուների (A1 մակարդակ ըստ ALTE համակարգի) Ես-համակարգի էթնիկական ինքնագիտակցության բաղադրիչի և երկրորդ լեզվի իմացության մակարդակի միջև բացահայտվել է կոռելյացիոն կապ, որն ունի հետևյալ արժեքը՝ ($r=0.54$): Այսինքն, կոռելյացիոն կապը այս երկու գործոնների միջև ուժեղ չէ: Սա նշանակում է, որ թերի երկլեզվությունը էթնիկական ինքնագիտակցության վրա ազդող շատ թույլ գործոն է:
 - Բաղադրյալ երկլեզուների (B1-C1) Ես-համակարգի էթնիկական ինքնագիտակցության բաղադրիչի և երկրորդ լեզվի իմացության մակարդակի միջև բացահայտվել է կոռելյացիոն կապ, որն ունի հետևյալ արժեքը՝ ($r=0.91$) և վկայում է ուժեղ դրական կապի գոյության մասին: Սա նշանակում է, որ անկախ ազգային պատկանելությունից, բաղադրյալ երկլեզվությունը էթնիկական ինքնագիտակցության մեջ զգալի փոփոխություններ առաջացնող գործոն է. այն, թուլացնում է անձի էթնիկական ինքնանույնացման աստիճանը:
 - Պարսիկ կորդինատային երկլեզուներ-հայ կորդինատային երկլեզուներ համադրության արդյունքում կոռելյացիոն գործակիցը ստացվեց $r=0.993$: Այս դեպքում արդեն, ինչպես տեսնում ենք, գրեթե բացարձակ դրական կախվածություն կա ուսումնասիրվող երկու երևույթների միջև:
 - Մշակութային նախապատվության ստուգման արդյունքները հետևյալն են. երկլեզվության տեսակը ազդում է մշակութային նախապատվության վրա: Մասնավորապես այն երկլեզուները, ովքեր իրենց երկրորդ լեզուն ձեռք են բերել միևնույն միջավայրում, ինչ իրենց մայրենի լեզուն, մշակութային տեսակետից փոփոխություններ գրեթե չեն կրում: Իսկ նրանք, ովքեր ձեռք են բերել երկրորդ լեզուն տվյալ օտար լեզվի բուն միջավայրում, ուժեղ արտահայտված մշակութային փոփոխություններ են կրում ($r=-0.99.8$):
5. Փորձարարական հետազոտության արդյունքում բացահայտվել է նաև.
- Բաղադրյալ երկլեզուները, որքան էլ լավ տիրապետեն երկրորդ լեզվին, որը ըստ ALTE համակարգի B2, C1, C2 մակարդակներն են, միամշակութային երկլեզուներ են, քանի որ նրանք ձեռք են բերում երկրորդ լեզուն միևնույն միջավայրում ինչ սկզբնաղբյուր լեզուն և չեն կարող ներառնալնացնել օտար լեզվի մշակույթը, նորմերը, վարքի յուրահատկությունները և այլն: Ինչպես մեր հետազոտությունն է ցույց տալիս, բաղադրյալ երկլեզվությունը էթնիկական ինքնագիտակցության

մեջ զգալի փոփոխություններ է առաջացնում, սակայն մշակութային նախապատվության արդյունքներից ելնելով՝ մենք տեսնում ենք, որ բաղադրյալ երկլեզուները մշակութային տեսակետից փոփոխություններ գրեթե չեն կրում:

- Կոորդինատային երկլեզուները, որոնք երկրորդ լեզուն ձեռք են բերել օտար լեզվի բուն միաջավայրում, ունեն բարձր լեզվական իրազեկություն: Կոորդինատային երկլեզուները փոփոխություն են կրում և՛ էթնիկական ինքնագիտակցության, և՛ մշակութային նախապատվության մեջ: Կոորդինատային երկլեզուները երկմշակութային երկլեզուներ են, ովքեր հավասարապես ներքնայնացրել են երկու /կամ ավելի/ մշակույթներ: Եվ նրանց Ես-երը փոխվում են մի լեզվից մյուսին անցնելիս:

6. Մինչ օրս հետազոտողները տարակարծիք են այն հարցի շուրջ, թե երկլեզվությունը դրական, թե՞ բացասական ազդեցություն է գործում մարդու մտավոր կարողությունների, կոգնիտիվ աճի, կրթական ձեռքբերումների և հարակից այլ երևույթների վրա: Հետազոտական արդյունքներն առայժմ մնում են հակասական: Այդ իսկ պատճառով, ակնհայտ է, որ առկա է խնդիրը ավելի նուրբ և բազմազորոծոն մոտեցումների տեսակետից հետազոտելու անհրաժեշտություն: Մասնավորապես՝ խնդիրն լույս կսփռի հետազոտություններում այնպիսի անկախ փոփոխականների ներգրավումը, ինչպիսիք են երկլեզվության տեսակները, տարիքային խմբերը, լեզվի կարգավիճակը, էթնոմշակութային ստրատիֆիկացիայի խնդիրների յուրահատկությունները տվյալ հանրություն և այլն: Այսպիսի համապարփակ մոտեցումը թույլ կտա հարցը ուսումնասիրել ավելի լայն ընդգրկմամբ և կնվազեցվի արդյունքների հակասականությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում:

1. Հ. Թորոսյան Հ. Շ., Երկլեզվության խնդիրները, Մանկավարժական Միտք 3-4, 2006, էջ 48-55:
2. Հ. Թորոսյան Հ. Շ., Մայրենի լեզվի յուրացման փուլերը, Մանկավարժական Միտք 1, 2008, էջ 70-75:
3. Հ. Թորոսյան Հ. Շ., Երկլեզվության ազդեցությունը անձի հոգեկանի վրա, Հոգեբանություն և կյանք, 3-4, 2010, էջ 43-46:
4. Հ. Թորոսյան Հ. Շ., Երկլեզվություն և ինքնագիտակցություն, Հոգեբանություն և կյանք 1-2, 2011, էջ 20-26:

ТОРОСЯН АСМИК ШАЛИКОВЕНА

ОСОБЕННОСТИ Я-КОНЦЕПЦИИ ЛИЧНОСТИ БИЛИНГВА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 «Общая психология, теория и история психологии, психология личности».

Защита диссертации состоится 28 октября 2014 года в 12.00 часов на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010. Ереван, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы обусловлена тем, что личность билингва, сталкивающаяся с культурно - языковым многообразием мира и усваивающая его, несомненно, имеет такие характерные особенности, которыми отличается от носителя одного языка – монолингва.

То, какое воздействие оказывает усвоение языка на личность, его психическую деятельность и особенности, с образованием каких именно новообразований сочетается формирование билингвизма, имеет важное значение для решения многочисленных теоретических и практических задач.

Основной целью исследования является разносторонний анализ явления билингвизма и его влияние на самосознание, выявление сущности соотношения билингвизма и культурных приоритетов личности.

Согласно научной гипотезе, лежащей в основе исследования, билингвизм оказывает прямое воздействие на Я-концепцию и культурные приоритеты личности, подвергая их изменениям. При том, каждый из типов билингвизма (координативный, составной) специфичен в плане/с точки зрения размеров и качества воздействия. В частности, координативный билингвизм является более сильным фактором, меняющим самосознание и культурные приоритеты личности, чем составной тип билингвизма.

Для проверки научной гипотезы и осуществления **цели** исследования предложены следующие исследовательские **задачи**:

1. Кратко и в системном порядке представить подходы и исследовательские данные по билингвизму в рамках психолингвистики;
2. Выявить влияние/воздействие билингвизма на самосознание личности, познавательные процессы, мышление, равно как на процесс социализации и особенности поведения;
3. Представить явление билингвизма, его типы и влияние, обращая особое внимание на проблему интерференции;

4. Опытным/эмпирическим путем выявить и сравнить Я-концепции личностей монолингвов и билингвов;
5. Опытным/эмпирическим путем исследовать и выявить те связи, которые наличествуют между разными типами билингвизма и этническим самосознанием и культурными приоритетами личности.

Теоретическая значимость исследования заключается в том, что посредством сопоставительного анализа в настоящей работе были изучены и представлены психологические аспекты и закономерности усвоения родного и иностранного языков, а также речевой деятельности личности. Было подвергнуто теоретическому анализу явление билингвизма, межъязыковой интерференции, были исследованы те социально-психологические условия, в которых происходит формирование билингвизма в контексте присущих ему разновидностей. Был проведен сравнительный анализ психологических особенностей, характерных для билингвальной и монолингвальной личности.

Проблема этно-психологической маргинализации личности была рассмотрена с данной точки зрения. Вопрос билингвизма и самосознания личности, а также влияние последнего на ее различные аспекты, в настоящей работе был подвергнут обстоятельному анализу, что также имеет важное теоретическое значение.

Практическая значимость исследования заключается в том, что полученные в результате исследования данные могут способствовать решению ряда практических задач. Среди них:

- Полученные данные могут быть использованы как психологами, так и педагогами и лингвистами при исследованиях теоретического и прикладного характера.
- В вопросе обучения иностранным языкам для научного обоснования подходов к задачам сохранения самосознания личности.
- Послужит базой для выработки и внедрения вузовской межпредметной дисциплины “Психологические основы билингвизма”.

Научная новизна

Были выявлены особенности влияния каждого отдельного вида билингвизма (координативный, составной) на Я-концепцию личности, на ее социо-культурную идентификацию и культурные приоритеты.

Достоверность и надежность исследования вытекает из научных требований, предъявляемых к психологическим исследованиям. Результаты обеспечили выбранные методологические основы, использованные методы, необходимое количество испытуемых, а также математические обоснования обработки результатов.

Структура работы. Диссертационная работа объемом 143 компьютерных страниц состоит из введения, четырех глав, заключения, списка использованной литературы и приложений. По теме диссертации опубликовано 4 статьи.

HASMIK SHALIKO TOROSYAN

THE PECULARITIES OF A BILINGUAL SELF_CONCEPT

Thesis of degree of candidate of psychological specialty 19.00.01- “General psychology, Theory and History of Psychology, Personality Psychology”.

The defense of the thesis will be held on October 28, 2014 at 12.00 at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC awarding degrees under the Armenian State Pedagogical University after KH. Abovyan (address: 0010, Yerevan, Tigran Mets 17)

SUMMARY

Actuality of the research: a bilingual is not a person who has two monolingual/ monocultural identities in one, but a person who has a unique identity which is not the same linguistically or culturally as that of a monolingual/ monocultural person of either culture, but has its basis in both languages and cultures.

Do the languages we speak shape the way we see the world, the way we think, and the way we live our lives? Do people who speak different languages think differently simply because they speak different languages? Does learning new languages change the way you think? Do bilinguals think differently when speaking different languages?

How the language learning affects a person, on psychological activity and peculiarities has an important meaning for solution for various practical and theoretical problems.

The aim of the research is to analyze the phenomenon of bilingualism comprehensively and its effect on the person’s self-concept, to show the relations of bilingualism and person’s cultural preferences.

Research hypothesis: Bilingualism has a direct effect on a person’s self-concept and cultural preferences and made changes in them. Therefore, the types of bilingualism (coordinate, compound) are unique referring to changes, particularly coordinate bilingualism has stronger influence on changing ones self-identity and cultural preferences than compound bilingualism.

For the fulfillment of the principal aim the following goals have been put forward.

1. To examine investigated results on bilingualism comprehensively and briefly in the sphere of psycholinguistics.

2. To spread light on the effect of bilingualism on a person's self-consciousness, mental activities; particularly, thinking, as well as social processes and behavioral peculiarities.
3. To present the bilingualism phenomenon with its types and effects paying special attention to the issue of interference.
4. To discover and to compare the self-concept of monolinguals and bilinguals.
5. To investigate and to discover those connections existing among different types of bilinguals, ethnic self-consciousness and cultural preferences.

The theoretical significance of the research - is that it has been exposed to scientific-theoretical analyses acquisition of mother and foreign tongues and person's verbal activity's psychological aspects and regularities. Bilingualism, a language interference phenomenon have been exposed to theoretical analysis, also has been investigated those socio - psychologic conditions in which bilingualism with its diversities is born.

Practical importance of the theme-is that its received research results can support a solution to a set of practical problems.

Mainly:

- Received results can be used by psychologists, as well as by linguists and pedagogues in order to carry out practical and theoretical investigations.
- In order to have scientific proven approaches in learning foreign languages for keeping national identification.
- Received results will form the basis for elaborating special university course "Psychological bases of bilingualism".

The scientific innovation of the research: is that it has discovered the effect of peculiarities of separate types of bilingualism, compound and coordinate, on person's self-concept, socio - cultural identification and cultural preferences.

The veracity and reliability of the research proceeds from the scientific requirements put forward for the psychological research. The results have ensured the chosen methodological bases, applied methods, the necessary number of examinees, as well as the mathematical justification of results elaboration.

Structure of the research: The dissertation is made up of a 143-computer-page composition with an introduction, four chapters, conclusion, bibliography and appendices.

Four articles were published dedicated to the investigation activities.



